ԲԱՂԱՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾՔԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

Մասնագիտական գրականության մեջ Բաղասականը տեղադրվել է Հյուսիսային Կովկասում[1], Աղվանքի հյուսիսարևելյան կողմերում, հոների սահմաններին մոտիկ[2], Ալազանի և Կուրի միջագետքում[3] կամ էլ նույնացվել Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի հետ[4]: Եղել են նաև բավականին հիմնավորված կարծիքներ, որոնց համաձայն Բաղասականը գտնվել է Կուրի ստորին ձախափնյակում[5]:

Մովսես Խորենացին, անդրադառնալով Մաշտոցի գործունեությանը, գրում է, որ նա Գողթնում տեղեկանում է, որ «չարեացն վարդապետք նախագոյնք ի Բաղասականն են կողմանս: Ուր երթեալ զբազումս յուղղութիւն ածէ, և զսակաւսն անդարձս յիշխանութիւն Հոնաց հալածականս առնէ: Հաւատալով զվարդապետութիւն կողմանցն այնոցիկ եպիսկոպոսին, որում Մուշեղն կոչէին՝ ինքն դառնայ զԳարդմանայ ձորովն. զի և ի նմա լուաւ լինել ի նոցին ընկերաց աղանդոյն»[6]: Բ. Ուլուբաբյանն այս տեղեկությունից եզրակացնում է, որ Բաղասականը Կուրի ձախափնյակի վերջում է, և Բաղասականն ու Գարդմանքը հարևաններ են[7]: Պատմահոր այս հաղորդումից սոսկ պարզվում է, որ Բաղասականը գտնվել է արևելյան Այսրկովկասում, հոների երկրից ոչ հեռու, ընդ որում, ոչ թե Մաշտոցն անձամբ է հետապնդում անհավատներին մինչև Հոնաց

---

[1] *Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 221:*

[2] *Կ ո ր յ ո ւ ն. Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով Մ. Աբեղյանի, Երևան, 1941, էջ 116, ծնթ. 116,* J. M a r q u a r t. Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i. Berlin, 1901, s. 119-120; *Ե ղ ի շ է. Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, աշխատասիրությամբ Ե. Տեր-Մինասյանի (այսուհետև՝ Եղիշէ), Երևան, 1989, էջ 153, ծնթ. 95:*

[3] *Ղ. Ա լ ի շ ա ն. Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 8:*

[4] *Ն. Ա դ ո ն ց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 249, 251, 471, ծնթ.1,* С. Т. Е р е м я н. Идеология и культура Албании III–VI вв.– В кн.: Очерки истории СССР III–IX вв. М., 1958, с. 323; *Ս. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 42-43, 88,* К. В. Т р е в е р. Очерки по истории и культуре Кавказской Албании. М.–Л., 1959, с. 75, 196; *Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 213,* R. H. H e w s e n. Caspiane: a Historical and Geographical Survey.– *«Հանդես ամսօրյա» (այսուհետև՝ ՀԱ), 1973, № 1–3, էջ 92:*

[5] *Տե՛ս, օրինակ, Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ.– «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ), 1971, №1, էջ 178–182: Այս տեսակետը, որում կան չպարզաբանված հարցեր, կփորձենք հիմնավորել հայ և օտարալեզու աղբյուրների տեղեկությունների ամբողջական քննությամբ:*

[6] *Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա. Բ. Սարգսեանի (այսուհետև՝ Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի), Երևան, 1990, էջ 340:*

[7] *Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 181:*

սահմանները, այլ նրանք են փախչում Հոնաց երկիրը: Գարդմանաձորի հետ անմիջական հարևանությունն անընդունելի է, քանի որ Խորենացին չի նշում, թե Մեսրոպը Բաղասականից ուղղակիորեն մտավ Գարդմանք, այն դեպքում, երբ Գուգարացոց Աշուշա բդեշխի հրավերով Գարդմանքից անմիջապես մեկնում է Տաշիր գավառը[8]: Խորենացու հաղորդած դեպքերի մասին ավելի մանրամասն գրում է նաև Կորյունը. «Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ (Մեսրոպ Մաշտոցը – Հ. Խ.) գնալ ի կողմանս Աղուանից, և երթեալ իջանէր յաշխարհն. և հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր զսուրբ եպիսկոպոսն Աղուանից, որում անուն Երեմիա կոչէին, և զնոցին թագաւոր, որում Արսվաղ էր անուն, ամենայն ազատօք հանդերձ. որոյ առավել հպատակութեամբ ընկալեալ վասն անուանն Քրիստոսի», ապա հավատի և դպրության գործը կարգավորելուց հետո «…ձեռնատու ևս եղեալ նմա սրբամատոյց վարդապետութեանն ի Բաղասական կողմանս սրբոյ եպիսկոպոսին՝ որում Մուշեղ կոչէին, հրաժարէր ապա և ի թագաւորէն և յեպիսկոպոսացն և յամենայն եկեղեցւոյն Աղուանից»[9]: Այնուհետև վարդապետը «խաղացեալ գայր ի կողմանցն Աղուանից, անցանել յաշխարհն Վրաց. և հանդէպ հասեալ գայր Գարդմանական ձորոյն»[10]: Մաշտոցի հյուսիսային երկրորդ ուղևորությունը թվագրվում է Սասանյանների կողմից 428 թվականին Մեծ Հայքի թագավորությունը վերացնելուց հետո ընկած ժամանակով[11], երբ հայոց Ուտիք աշխարհը Սասանյան արքունիքի կողմից միացվեց նորաստեղծ Աղվանից մարզպանությանը[12]: Կորյունի տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Մաշտոցի հանդիպումը Աղվանքի թագավորի և եպիսկոպոսի հետ տեղի է ունեցել ոչ թե Չորում[13], այլ արքայանիստ Կապաղակում[14]: Բաղասականի մասին հիշատակությունը դեռևս հստակ տեղադրության հնարավորություն չի տալիս, և միայն պարզվում է, որ այն գտնվել է Կապաղակին մոտ, թե որ ուղղությամբ՝ հյուսի՞ս, թե՞ արևելք, հայտնի չէ: Կորյունի հիշյալ տեղեկության մեջ կարևոր է հետևյալ իրողությունը. նախ Աղվանքում, հետո Բաղասականի կողմերում իր գործն ավարտելուց հետո Մաշտոցը

---

[8] *Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 341:*

[9] *Կ ո ր ի ւ ն. Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի (այսուհետև՝ Կորիւն), Թիֆլիս, 1913, էջ 27–29:*

[10] *Նույն տեղում, էջ 29:*

[11] *Միաժամանակ այն ընկնում է 431 թվականին տեղի ունեցած Եփեսոսի տիեզերական ժողովից առաջ. տե՛ս Ա. Հ ա կ ո բ յ ա ն. Մաշտոցի երկրորդ հյուսիսային ուղևորության ժամանակը և խնդիրները.– Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին, Զեկուցումների ժողովածու, Երևան, 12–17 սեպտեմբերի, 2005 թ., Երևան, 2006, էջ 122–131:*

[12] *Տե՛ս Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջ.– ԲԵՀ, 1975, № 2, էջ 149–164, Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թթ.– ԲԵՀ, 1976, № 2, էջ 77–95, ն ո ւ յ ն ի՝* Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ.– Кавказ и Византия, вып. I. Ереван, 1979, с. 19–35; А. А. А к о п я н. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, с. 109–114.

[13] *Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, էջ 181:*

[14] *Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881, 29: Տե՛ս նաև Մատենագիրք Հայոց, հ. Բ, Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2151:*

«հրաժարէր ապա և ի թագաւորէն և յեպիսկոպոսացն և յամենայն եկեղեցւոյն Աղուանից», իսկ քանի որ բաժանումը տեղի է ունենում Բաղասականում, ուրեմն Բաղասականը համարված է Աղվանքի բաղկացուցիչ հատվածը: Բաղասականի՝ Աղվանքի մեջ լինելու իրողությունը հաստատվում է նաև Կորյունի այն կարևոր մատնանշումից, որ վարդապետը բաժանվում է ոչ միայն Աղվանքի թագավորից, այլ նաև եպիսկոպոսներից և «յամենայն եկեղեցւոյն Աղուանից», իսկ այս հանգամանքը վկայում է այն մասին, որ Բաղասականի Մուշեղ եպիսկոպոսը, ինչպես նաև այլ եպիսկոպոսներ, ենթարկվում էր Աղվանից եկեղեցուն, հետևաբար, Բաղասականը վարչական առումով մտնում էր Աղվանից մարզպանության կազմի մեջ: «Գիրք թղթոցի» տվյալներից ևս պարզվում է, որ Բաղասականը Աղվանից եկեղեցու եպիսկոպոսական թեմերից մեկն էր[15], ըստ այդմ՝ Բաղասականի նույնացումը Փայտակարանին բացառվում է, քանի որ վերջինս, համաձայն աղբյուրների, 428 թվականից հետո մտնում էր Ատրպատականի մեջ[16]: Կորյունի հաղորդումից պարզվում է նաև, որ Մաշտոցը, ճիշտ է, Աղվանից առաջնորդներին հրաժեշտ է տալիս Բաղասականի կողմերում, սակայն դա չի նշանակում, թե դուրս է գալիս Աղվանից մարզպանության տարածքից և Վրաց աշխարհն անցնելու համար ճանապարհ ընկնում Աղվանքի կողմերից և հասնում Գարդմանական ձորի դիմաց: Մաշտոցը, Աղվանքի կողմերից հասնելով Գարդմանաձոր–Ուտիք նահանգի գավառներից մեկը, դուրս է գալիս Աղվանքից և մտնում Արևելյան Հայաստանի գավառներից մեկը, որը ժառանգական իշխանական տիրույթ էր, և, ի տարբերություն Ուտիքի մյուս գավառների, որոնք արքունի տիրույթներ էին[17] և Մեծ Հայքի թագավորության վերացումից հետո միացվել էին Աղվանից մարզպանությանը, Գարդմանաձորը 428 թվականից հետո էլ մնում էր մարզպանական Հայաստանի կազմի մեջ: Պատահական չէ, որ Մովսես Դասխուրանցին, խոսելով Մաշտոցի լուսավորչական գործունեության մասին Ուտիքում, Աղվանքում, Լփինքում,

---

[15] *Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 81: Հետաքրքիր է, որ միջին պարսկերենով պահպանվել է «Աղվանքի և Բաղասականի կաթողիկոսի» կնիքը (տե՛ս* Э. Хуршудян. Армения и сасанидский Иран. Алматы, 2003, с. 320*): Բաղասականի առանձին նշումը խոսում է այն մասին, որ Աղվանքը և Բաղասականը եղել են վարչական առանձին միավորներ, որոնք ունեին մեկ կաթողիկոս:*

[16] *«Փայտակարան յելից կայ Ուտիոյ առ Երասխաւ. գաւառս ունի երկոտասան, զոր այժմ Ատրպատական ունի» (Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ…, էջ 33): «…Միհրներսեհ Արեաց հազարապետ եկեալ ի Փայտակարան քաղաք՝ զունդ կազմէ և ընդ Աղուանս արձակէ ի Հայս…» (Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982, էջ 146): Մինչև 428 թվականը Փայտակարանը գտնվում էր հայկական թագավորության կազմում. տե՛ս Բ. Հ. Հարությունյան. «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը.– ՊԲՀ, 1976, №2, էջ 69, նույնի՝ Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը.– ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1981, №12, էջ 68):*

[17] *Տե՛ս* Б. А. Арутюнян. Административно-политическое состояние северо-восточных областей царства Великой Армении в 387–451 гг.– К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении. Т. I. Ереван, 1991, с. 20, 28. *Բ. Հարությունյանը Մաշտոցի երկրորդ ուղևորությունը դնում է 422 թվականից հետո (նույն տեղում, էջ 26):*

Կասպքում, Ճորա պահակում[18], Ուտիքը, տվյալ պարագայում՝ Գարդմանաձորը, չի կապում Աղվանքի հետ: Միաժամանակ Կորյունի տեղեկությունն էլ հիմք չի տալիս եզրակացնելու, թե Բաղասականը և Գարդմանքը հարևաններ էին[19]:

Խորենացու և Կորյունի հաղորդումների համեմատությունը ցույց է տալիս, որ նկատի առնելով հոների մասին պատմահոր հիշատակումը, կարելի է որոշակի տեղագրական ճշգրտումներ կատարել Բաղասականի տեղադրության հարցում: Այսպես, հայ մատենագրության մեջ հոների երկիրը տեղադրվել է այժմյան Դերբենդ (Դարբանդ) քաղաքից հյուսիս, ընդ որում քաղաքի մոտ գտնված լեռնանցքը՝ Կասպից ծովի ափին, հայտնի է եղել ի շարս այլ անվանումների նաև «Հոնաց պահակ» անունով[20]: Եթե հավելենք նաև Ղազար Փարպեցու տեղեկությունն այն մասին, որ Ճորա պահակը (իմա՛ Հոնաց պահակ, Աղվանից դուռ) Հոնաց և Աղվանից սահմանն էր[21], ապա Կասպից ծովի արևմտյան առափնյա շրջանները, այդ թվում նաև Բաղասականը, եղել են Աղվանից մարզպանության գավառները, հետևաբար, Մեսրոպի կողմից հալածված անհավատները, փախչելով Հոնաց երկիրը, ընդհանրապես հեռացել են Աղվանքից: Հոների տեղադրությունը Դարբանդի պարսպից հյուսիս վկայված է նաև հայոց «Աշխարհացույց»-ում[22], ուրեմն հոների տեղադրությունը տարակարծությունների տեղիք չի կարող տալ: Ասվածի լույսով հետաքրքիր է Եղիշեի այն տեղեկությունը, որ Աղվանից թագավորը (իմա՛ Վաչե) քանդում է Ճորա պահակը և մասքութների զորքն անցկացնում դեպի հարավ: Միաժամանակ թագավորը դաշնակցում է տասնմեկ լեռնական թագավորների հետ և պատերազմում պարսից զորքերի դեմ[23]: Մասքութների հիշատակությունը Ճորա պահակից հյուսիս կասկածելի է, քանի որ նշված լեռնանցքից հյուսիս գտնվել են հոները: Նախ և առաջ, եթե Ճորա պահակը բացել է Աղվանից թագավորը, ապա նրան է հանձնված եղել լեռնանցքի պաշտպանությունը կամ էլ կարողացել է գրավել պարսիկներից, քանի որ նույն Եղիշեն այլ դեպքերի կապակցությամբ հայտնում է, որ պարսիկ մարզպան Սեբուխտը, Ճորա կողմերից շարժվելով, անցնում է Կուր գետը և բանակում Խաղխաղ քաղաքի մոտ[24]: Սա նշանակում է, որ Ճորա պահակը քիչ ավելի ուշ ևս պետք է ունենար պարսիկ կառավարիչ, որին հաղթելուց հետո միայն Աղվանից թագավորը կարող էր լեռնանցքը գրավել ու ավերել[25]: Ինչ վերաբերում է մասքութներին, որոնք գտնվել են

---

[18] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի (այսուհետև՝ Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի), Երևան, 1983, էջ 95:*

[19] *Նույն տեղում:*

[20] *Ե ղ ի շ է, էջ 87, 157, 287:*

[21] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, էջ 155, 197:*

[22] *Ա. Գ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Անանիա Շիրակացու մատենագրությունը (այսուհետև՝ Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի), Երևան, 1944, էջ 347–348:*

[23] *Ե ղ ի շ է, էջ 399:*

[24] *Նույն տեղում, էջ 151:*

[25] *Վարդանանց պատերազմի ժամանակ հայոց զորագունդը գրավում է Հոների կամ Ճորա պահակը և հանձնում Աղվանից թագավորների ցեղից սերող Վահանին (նույն տեղում, էջ 157):*

Կասպից ծովի արևմտյան ափին, Չողի կամ Ճորայի շրջանում[26], ապա կամ սրանք շփոթված են հոների հետ, կամ էլ Աղվանից թագավորը Ճորա պահակը գրավելուց հետո դաշնակցել էր Չողի մարզպանի անմիջական ենթակայության տակ գտնվող մասքութների հետ: Ինչևէ, այն իրողությունը, որ Ճորա պահակը վերահսկվել է Աղվանից թագավորի կողմից, անժխտելի է, քանի որ պարսիկները բացում են Կովկասյան լեռնաշղթայի մեկ ուրիշ՝ Ալանաց դռները (Դարիալի կիրճը) և հոներին ուղղում ապստամբ Աղվանից թագավորի դեմ[27]: Ելնելով այն հանգամանքից, որ պարսիկները օգնություն են ստանում հենց խայլանդուրներից[28], որոնց անունը բացատրվել է որպես «հոնաց արքայական հորդա»[29], ապա, կարծում ենք, որ Եղիշեի՝ վերը հիշատակած տեղեկության մեջ մասքութները շփոթված չեն հոների հետ, և Աղվանից թագավորը չի դաշնակցել հոների հետ, այլ, գրավելով Ճորա պահակը, դաշնակցել է մասքութների հետ և իր վերահսկողության տակ վերցրել լեռնանցքը: Մասքութների մասին մեր նկատառումները համադրելով Խորենացու այն տեղեկությանը, թե աղանդավորների մի մասը Բաղասականից փախչում է Հոնաց կողմերը, ցույց է տալիս, որ Բաղասականի մեջ ներառվել է նաև Մասքթաց աշխարհը, հետևաբար, Բաղասականը տեղադրվում է բուն Աղվանքից արևելք:

Այս իրողության համեմատությունը Մովսես Դասխուրանցու մի աղբյուրի՝ Մաշտոցի մասին պատմող տեղեկությունների հետ, բացահայտում է հետաքրքիր այլ մանրամասներ: Համաձայն VII դարի այդ հեղինակի, սուրբ Մեսրոպը «ձգէր զքարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտիացւոց և յԱղուանս, և՛ Լփինս, և՛ ի Կասպս, և՛ մինչև ի դուռն Չորայ» և նույնիսկ քրիստոնեություն է սկսում տարածել գարգարների, կամիճիկների, հեփթաղների, սարոստայնների մեջ[30]: Այս տեղեկության համեմատությունը Անանուն պատմիչի՝ Մեսրոպի գործունեության մասին պատմող մյուս հաղորդման հետ ցույց է տալիս, որ նրա հիմքում ընկած լեգենդար պատումը Աղվանքում Մաշտոցի գործունեության տարբեր ժամանակաշրջաններ խառնել է իրար՝ հետ ու առաջ տանելով երկու առանձին ժամանակահատվածներում կատարված իրադարձությունները: Այսպես, դատելով Կորյունի և Խորենացու տեղեկություններից[31], Մաշտոցը աղվանների (կամ գարգարացիների) համար նշանագրեր ստեղծել էր դեպի Աղվանք կատարած առաջին ուղևորության ժամանակ, այն դեպքում, երբ «Ադուանից պատմութիւն»-ը նշանագրերի ստեղծումը կապում է երկրորդ ուղևո-

---

Հայոց ապստամբության ճնշումից հետո, անշուշտ, պարսիկները վերականգնել էին իրենց իշխանությունը Ճորա պահակում:

[26] *Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ…, էջ 27, Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, էջ 347:*

[27] *Ե ղ ի շ է, էջ 399:*

[28] *Նույն տեղում:*

[29] J. M a r q u a r t. *Նշվ. աշխ., էջ 96: Եղել են նաև այլ մեկնաբանություններ, որոնց մասին տե՛ս Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության (V-VII դդ.), Երևան, 1981, էջ 44:*

[30] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 95: Հեղինակի հիշատակած բաղասականցիների (բնագրում՝ բաղականացիք) և Ստ. Օրբելյանի Բաղասականի մասին տե՛ս Բ. Ո ւ լ ո ւ - բ ա բ յ ա ն. Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, էջ 182:*

[31] *Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 329, Կ ո ր ի ւ ն, էջ 27:*

ության հետ[32], հետևաբար, աղվան-գարգարացիների համար նշանագրերի ստեղծումը պետք է տանել առաջին ուղևորության ժամանակաշրջանը, իսկ Ուտիքում, Աղվանքում, Լփինքում, Կասպքում և Ճորա պահակում Մաշտոցի լուսավորչական գործունեությունը կապել երկրորդ ուղևորության հետ, ինչպես վկայում են Կորյունը և Խորենացին: VII դարի հեղինակի կողմից բուն Աղվանքից արևելք ընկած Լփինքի, Կասպքի և Ճորա պահակի հիշատակումը խոսում է այն մասին, որ հիշյալ երկրները միասին վերցրած աշխարհագրորեն ընդգրկում են Բաղասականը, այսինքն՝ Կասպից ծովի արևմտյան ծովափնյա շրջանները, իսկ հյուսիսկովկասյան ցեղերի շրջանում Մաշտոցի գործունեությունն այլ աղբյուրներով չի հաստատվում: Եղիշեն, խոսելով Վարդանանց պատերազմի մասին, գրում է, որ Ճորա կողմերի մարզպան Սեբուխտը զորքով գալիս և բանակ է դնում Խաղխաղի մոտ: Ինչպես երևում է պատմիչի հետագա շարադրանքից, Սեբուխտի հրամանատարության տակ էին նաև Բաղասականի թագավորը և Լփնաց թագավորի եղբայր Վուրկը[33]: Այս տեղեկությունը ցույց է տալիս, որ Բաղասականը և Լփինքը գտնվել են բուն Աղվանքից արևելք, Կուր գետի ստորին հոսանքի ձախափնյակում: Եղիշեի այն տեղեկությունն էլ, թե Բաղասականի թագավորը դաշնակցել էր Հոն Հեռանի հետ և մեծ վնասներ պատճառել Պարսից թագավորին[34], կրկին Բաղասականը տեղորոշում է Ճորա պահակից սկսած մինչև Կուրի ստորին հոսանքի ձախափնյակ, Կասպից ծովի արևմտյան ծովամերձ հատվածում: Դատելով հայկական որոշ աղբյուրների հաղորդումների համեմատությունից՝ Բաղասականը նեղ առումով համապատասխանում է հայկական աղբյուրների Կասպք երկրին, իսկ այս անունով հայկական և անտիկ աղբյուրներում հայտնի էր ոչ միայն Փայտակարանը, այլ նաև հյուսիսկուրյան մերձափնյա մարզը[35]: Այսպես՝ Ագաթանգեղոսը, խոսելով Պարթև Արշակունիների թագավորության անկման մասին, գրում է, որ Հայոց Խոսրով թագավորին «վաղվաղակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր և քաջ առն և ձիոյ և բուռն կազմութեամբ Աղուանք, Լփինք և Ճիղպք, Կասպք և այլ ևս որ ի սմին կողմանց, զի զվրէժ արեանն Արտաւանայ խնդրեսցեն»[36]: Այս տեղեկությունը կրկնում է նաև Ուխտանեսը. «Իսկ ի գալ տարւոյն՝ յետ սպանանելոյն զԱրտաւան և թագաւորելոյն Արտաշրի՝ որդւոյ Սասանայ՝ սկսաւ զօրաժողով լինել Խոսրով արքայն Հայոց. և ժողովեաց զզօրս Աղուանից, և զՎրաց, և զԼփնաց, և զՃղբաց և զԿասբից և զզօրս Հոնաց հանեալ մեծաւ ուժով, և զայլ ևս բազում զօրս յայլոց ազգաց, և ազդ առնէր Փիլիպպոսի Կայսեր

---

[32] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի, էջ 117:*

[33] *Ե ղ ի շ է, էջ 153, 155:*

[34] *Նույն տեղում, էջ 271:*

[35] *Կասպերի մասին մանրամասն տե՛ս Ա. Հ ա կ ո բ յ ա ն. Կասպերի և Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրության մասին.– ԼՀԳ, 1983, -1, էջ 87-99:*

[36] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 24-26: Այս կասպերը հիշատակվում են նաև «Աշխարհացոյց»-ում. «…Խենաւկք, Շիպղք, Ճիղաք, Խեղայք, Կասբք, Փուխք, Շրուանք…» (տե՛ս Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, էջ 347):*

Հռոմայեցւոց, զի և նա օգնեսցէ նմա զօրս տալով»[37]*: Եթե այս տեղեկություններին ավելացնենք նաև Մովսես Կաղանկատվացու հաղորդումը, որ Մաշտոցը քրիստոնեությունը քարոզում է Ուտիքում, Աղվանքում, Լփինքում, Կասպքում և Ճորա պահակում*[38]*, ապա Կասպքի տեղադրությունը Կասպից ծովի արևմտյան ափին, Լփինքից, Ճիղպքից արևելք*[39]*, կարծում ենք, տարակարծությունների տեղիք չի կարող տալ, իսկ Ուխտանեսի մոտ Կասպքից հետո հոների հիշատակումը թույլ է տալիս Կասպքի սահմանը հյուսիսում հասցնել մինչև Դերբենդ*[40]*: Այսպիսի տեղադրությամբ և սահմաններով Կասպքը համապատասխանում է Բաղասականին, սակայն նկատի ունենանք, որ Կասպքը աշխարհագրական անվանում էր, ամենայն հավանականությամբ, էթնիկական ծագում ունեցող Բաղասականի տարածքը ցույց տալու համար: Սակայն հետաքրքիր է, որ Եղիշեն, թվարկելով արևելյան Այսրկովկասի տարբեր ժողովուրդների, լռում է բաղասականցիների կամ կասպերի մասին: Այսպես, պատմիչը, խոսելով Վասակ Սյունու գործունեության մասին՝ հայերին օգնության շտապող հոների մուտքը Այսրկովկաս թույլ չտալու համար, գրում է. «Սակայն և վասն նոցա կուտեաց զբազում այրուձին Արեաց, արգել և փակեաց զդրունս ելին նոցա: Քանզի ոչ տայր դադար ամենևին թագաւորին Պարսից, այլ յղէր և կոչէր զունդս բազումս ի պահակն Ճորայ, և զՎրաց աշխարհն բովանդակ անդ գումարէր, զզօրսն Լփնաց և զՃղբաց, և զՎատն, զԳաւն և զԳղուարն և զԽրսանն և զՀեճմատակն, զՓասին և զՓոսին, և զՓիւքուան և զամենայն զօրսն Թաւասպարանն, զլեռնայինն և զդաշտայինն, և զամենայն ամրակողմն լերանցն»*[41]*: Երկրորդ վկայության մեջ ասվում է. «Եւ զՄուշկան Նիսալաւուրտ հանդերձ ամենայն մնացեալ զօրուն գումարէր յաշխարհն Աղուանից և Լփնաց և Ճղբաց և ի Հեճմատակաց և ի Թաւասպարաց և ի Խիբիովան, և յամենայն ամրականս, զորս աւերեալ էր գնդին Հոնաց վասն ուխտին Հայոց»*[42]*: Այս տեղեկություններում Բաղասականի բացակայությունը, թերևս, կարելի է բացատրել Եղիշեի այն վկայությամբ, որ հայոց ապստամբությունից հետո, երբ տեղի էր ունենում ապստամբության մեղավորների և կազմակերպիչների դատավարությունը, Վասակին ամբաստանողները հայտնում են, թե ինչպես էր Վասակը բարեկամացել Հոն Հեռանի հետ Բաղասական թագավորի հետ միաբանած, այն ժամանակները, երբ այդ Հեռանը կոտորեց պարսից զորքերին Աղվանքում, ասպա-*

---

[37] *Ուխտանէս Եպիսկոպոս. Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 70:*

[38] *Մովսէս Կաղանկատուացի, էջ 95:*

[39] *Համաձայն Բ. Հարությունյանի՝ Լփինքի (Ճիղբքի հետ մեկտեղ) սահմաններն էին. արևմուտքում՝ Գարդման գետը, Կովկասյան լեռնաշղթայի Բաբադաղ լեռից սկիզբ առնող բազուկը մինչև Բաբադաղ, հյուսիսում՝ Կովկասյան լեռնաշղթան մինչև Ալթբաղաչ գյուղի հարավակողմը, արևելքում՝ Ալթբաղաչ-Սյունդյու-Մարազա-Գիջակ լեռ-Փիրսաղատ գետից արևմուտք գտնվող բլուրներ-Կուր գետ և հարավում՝ Կուր գետ: Լփինքի արևելյան սահմանը, ըստ ուսումնասիրողի, Կասպքի արևմտյան սահմանն էր (տե՛ս Բ. Հարությունյան. Լփինքի տեղադրության հարցի շուրջ.– ԲԵՀ, 1981, № 1, էջ 123):*

[40] *Նշենք, որ տվյալ տարածքը Կասպիանա (Կասպք) է անվանվում նաև անտիկ և բյուզանդական որոշ աղբյուրներում (մանրամասն տե՛ս Ա. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 87-99):*

[41] *Եղիշէ, էջ 190:*

[42] *Նույն տեղում, էջ 260:*

տակելով հասավ Հունաց երկիրը և բազմաթիվ գերիներ ու շատ ավար տարավ հոռոմներից, հայերից, վրացիներից և աղվաններից. «որպէս զի ի վերայ իսկ եհաս խորհրդոցն ինքն իսկ թագաւորն, և սպան զԲաղասական արքայ»[43]: Այս վերջին տեղեկությունից կարելի է ենթադրել, որ Բաղասական թագավորությունը պարսից արքունիքի նկատմամբ դրսևորած իր անհնազանդության համար զրկվել էր թագավորական իշխանությունից կամ էլ թագավորական իշխանությամբ անցել էր Լփինքին, իսկ Եղիշեի վկայությունները վերջինիս մասին[44] ցույց են տալիս, որ Լփնաց աշխարհը Այսրկովկասում տեղի ունեցող քաղաքական անցուդարձերում ունեցել է խոշոր նշանակություն և աշխարհագրական առումով ընդգրկել է բուն Աղվանքից արևելք ընկած երկրամասերը:

Բաղասականի տեղադրությունը Կուրի ստորին հոսանքի ձախափնյակում հաստատվում է նաև Փավստոս Բուզանդի տեղեկություններով: Բուզանդը գրում է. «Յայնմ ժամանակի թագաւորն Մազքթաց Սանէսան անհնարին նիւթեաց զսրտմտութիւն ոխութեան ընդ իւրում ազգակցին Խոսրովու արքային Հայոց, և գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և Փոխաց, Թաւասպարաց, Հեճմատակաց, Իժմախաց, Գաթաց, և Գղուարաց, Գուգարաց, Շչբաց և Ճղբաց և Բաղասճաց և Եգերսուանացն[45], և այլոց խառնաղանճ բազմութեամբ անթիւ անբնակն վաչկատուն զօրութեանց, որում միանգամ ինքն իշխէր զօրացն բազմաց»[46]: Այս տեղեկության մեջ ճիղբերի հիշատակությունը թույլ է տալիս բաղասիճներին (հմմտ. ատրպատիճներ և Ատրպատական)[47] տեղադրել ճիղբերից արևելք, Բաղասական երկրում, որը ենթակա էր մասքութների իշխանությանը: Հաջորդ տեղեկության մեջ Բուզանդը հայտնում է, որ Սանեսանի զորքերի մնացորդները հալածվում են մինչև Բաղասճիների աշխարհը[48], այսինքն՝ Մեծ Հայքի սահման Կուր գետից հյուսիս:

Ղևոնդը հաղորդում է, որ խազարները Կուրից հյուսիս գրավում են Աղվանքի գավառները՝ Հեջար, Քաղա, Ոստան Մարզպանյան, Հաբանդ, Գեղավու, Շաքե, Բեխ, Խենի, Կամբեխճան, Խողմազ, որոնցից հետո ավելացնում է. «առին և զցանկալի դաշտն Բաղասական…»[49]: Բաղասական դաշտի առանձին հիշատակումը կարծես թե նշանակում է, որ այն չէր մտնում բուն Աղվանքի մեջ, սակայն «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրություններում այն Աղվանքի գա-

---

[43] *Նույն տեղում, էջ 270:*

[44] *Նույն տեղում, էջ 20, 102: Երբ Եղիշեն Խաղխաղի ճակատամարտի ժամանակ խոսում է Բաղասականի թագավորի թագավորազունների մասին, թերևս, կարելի է մտածել, որ հեղինակն այստեղ նկատի ունի Բաղասական թագավորության ժառանգներին, քանի որ թագավորն արդեն կենդանի չէր (նույն տեղում, էջ 152): Ա. Հակոբյանն իրավացիորեն կարծում է, որ Բաղասականի թագավորը տիրել է Ճորա պահակին կամ մասնակցել վերջինիս պահպանությանը (տե՛ս* Ա. Ա. Ա կ օ պ յ ա ն. *Նշվ. աշխ., էջ 118–119):*

[45] *Ըստ Բ. Հարությունյանի՝ եգերսվանների անունը կապված է Պտղոմեոսի հիշատակած Սոանաս և Գերրոս գետերի հետ, որոնք հոսում են արևելյան Աղվանքով (տե՛ս* Ա. Ա. Ա կ օ պ յ ա ն. *Նշվ. աշխ., էջ 94, ծնթ. 278*):

[46] *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, Երևան, 1987, էջ 28:*

[47] *Նույն տեղում, էջ 318:*

[48] *Նույն տեղում, էջ 30:*

[49] *Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Սանկտ Պետերբուրգ, 1887, էջ 132:*

վառներից էր: Այսպես, հայոց «Աշխարհացոյց»-ում Աղվանքի մասին գրված է. «ԻԱ. Աշխարհ Աղբանիա, այսինքն Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչեւ ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետով. թէպէտ եւ աստի ցԿուր զամենայն սահմանս հանեալ է ի Հայոց: Բայց մեք ասասցուք զբուն աշխարհն Աղուանից որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն: Նախ առ Վրօք, Եխնի գաւառ առ Աղուան գետովն, եւ Քամբէճան առ Կուրաւ. եւ ըստ հարաւոյ նորա բերդն Վարազմանաւառ, հանդերձ Կուդրաթ գեղաքաղաքաւ, եւ վայրքն անապատ մինչեւ ցԿուր գետ. յորոյ յելից կողմանէ Գրուգաւ քաղաք, առ Աղուան գետով, եւ Բիխ գաւառ առ Կաւկասաւ, եւ յելից նորա, Շաքէ, եւ Դէգառու գետ. առ որով հոմանուն գաւառ՝ առ Սանի գետով: Այս ամենայն հոսին ի Կովկասայ, եւ խառնեալ ի յԱղուան գետ՝ անկանին ի Կուր գետ. իսկ ի յելից կուսէ՝ Քավաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սէբոջ դէպ ի հարաւոյ ըստ փոքր (?) Հայոց»[50]*: Բաղասական դաշտը հիշատակվում է «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության տարբերակներում:*

«ԻԶ. Աղբանիա, այս ինքն է Աղուանք, յելից կալով Վրաց առ երի Սարմատիոյ առ Կաւկասաւ մինչն ցԿասբից ծովն և ցՀայոց սահմանսն առ Կուր գետով: Ունի դաշտս արգաւանդս, քաղաքս և բերդս և գեղաքաղաքս, գետս բազումս, եղեգունս հզօրս: Եւ գաւառք են այսոքիկ. Եխնի, Բեխ, Քամբէճան, Շաքէ, Ոստանի Մարծպան, Դաշտի Բալասական. և այլ գաւառս զորս ի Հայոց հանեալ է, Շիկաշէն, Գարդման, Կողթ, Զաւէ և այլ քսան գաւառ մինչն ցխառնումն Երասխայ ի Կուր գետ»[51]*:*

«Քսան եւ վեցերորդ՝ Աղբանիա է, այսինքն Աղուանք, յելից կալով Վրաց առ երի Սարմատիոյ առ Կաւկասաւ մինչեւ ի Կասբից ծովն եւ ցՀայոց սահմանն առ Կուր գետով: Եւ ունի Աղուանք դաշտս արգաւանդս, եւ գետս բազումս, եւ եղեգունս հզաւրս, եւ քաղաքս, եւ բերդս, եւ գեղաքաղաքս: Եւ գաւառք են այսոքիկ. Եխնի, Բեխ, Քամբեճան, Հողմաղ, Շաքէ, Գեգաւու, Ոստան, Հաբանդ, Իմարծ, Պանան, Քաղաց դաշտ, Իրազկան. եւ այլ գաւառք, զոր ի Հայոց հանեալ է. Շակաշէն, Գարդման, Քուստիփառնես, Կողթ, Ազուէ, Թուչքատակ, Ռտռոստակ, Ռոտպաեակ, Մեծ Կուանք, Մեծ Իրանք, Պիանք, Հարճլանք, Պածանք, Մոխանք, Վակունիք, Փոքր Հաբանդ, Միսական, Ռոտաստակ, Բերձոր, Ասռոտ մինչեւ ի խառնումն Երասխայ ի Կուր գետ»[52]*:*

«Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունից պարզվում է, որ Աղվանքի նկարագրության մեջ հին Աղվանքի ծովափնյա մասն արտացոլված չէ, այսինքն՝ հեղինակը Կապաղակից արևելք ընկած տարածքները բուն Աղվանքի մաս չի համարում[53]*: Համառոտ խմբագրության մեջ բացակայում է Կապաղա-*

---

[50] *Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ…, էջ 28-29: Տե՛ս նաև Մատենագիրք Հայոց, հ. Բ, էջ 2151:*

[51] К. П. П а т к а н о в. Армянская География VII века. СПб., 1877. *Հավելված՝ «Աշխարհացոյց Է դարու», էջ 17:*

[52] *Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, էջ 348:*

[53] *Թեպետ պետք է նշել, որ ըստ Ա. Հակոբյանի եզրահանգման՝ այդ պակասը գալիս է ընդարձակ խմբագրության միակ ձեռագրի գրչի վրիպումից, որը տվյալ տեղում բաց է թողել շուրջ երկու պարբերություն (տե՛ս Ա. Հ ա կ ո բ յ ա ն. Միսական-ի Կոտակ և Արցախի հարա-*

կը, ավելի ճիշտ Կապաղակի անունը և միաժամանակ Մարծպանի (իմա՛ Մարզպանյան) և Դաշտի Բալասականի ու Իրազկանի հիշատակությամբ արդեն Աղվանքի սահմանները հասցվել են արևելքում մինչև Կասպից ծով: Այստեղ ուշադրություն ենք հրավիրում հետևյալ հանգամանքի վրա: Չնայած «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության երկու հրատարակություններում էլ Ոստանի Մարծպանը հիշատակվում է մի դեպքում որպես մեկ վարչական միավոր, մյուս դեպքում Ոստանի և Իմարծպանանի (բնագրում առանձին հիշատակված Իմարծը, Պանանը, անշուշտ, պետք է կարդալ Իմարծպանան) միջև հայտնվել է Հաբանդը, միանում ենք մի շարք ուսումնասիրողների այն կարծիքին, որ Ոստանը և Իմարծպանանն առանձին վարչական միավորներ են. Ոստանը համապատասխանում է Աղվանից թագավորների մայրաքաղաք Կապաղակին իր շրջանով, իսկ Իմարծպանանը՝ Աղվանից մարզպանների նստավայրին՝ Չողին[54]: Հետևաբար, Աղվանից մարզպանության արևելյան հատվածի հյուսիսային ծովափնյա մասն ընդգրկված է Իմարծպանան-Մարզպանյանի մեջ, իսկ հարավային ծովափնյա հողերը՝ Դաշտի Բալասականի կամ Իրազկանի մեջ: Ընդ որում, «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության առաջին տարբերակում Դաշտի Բալասականը տեղադրված է Մարզպանյանից հարավ, իսկ երկրորդ խմբագրությունում՝ Իրազկանը՝ Կապաղակից հարավ ընկած Քաղաց դաշտից[55] արևելք: Վարչական և աշխարհագրական առումով Դաշտի Բալասականը և Իրազկանը հավասարազոր հասկացություններ են, նույնական Բաղասականին, ընդ որում, միանգամայն հնարավոր է, որ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության երկրորդ տարբերակում Քաղաց դաշտի հենց «դաշտ» բառը կապված է Իրազկանի հետ՝ որպես Դաշտի Բազկան:

Այսպիսով՝ Դաշտի Բալասականը կամ Դաշտի Բազկանը, ընդգրկելով Լփինքը, Ճիղբքը, տարածվում էր Կուր գետի ստորին հոսանքի ձախափնյակում, ինչը, կարծում ենք, հաստատվեց նաև վերը կատարած մյուս աղբյուրների քննությամբ: Հետևաբար, այն տեսակետը, որ Բաղասականը լայն առումով ընդգրկում էր հին Աղվանքի ամբողջ արևելյան կեսը, իսկ նեղ առումով Կուրի ստորին հոսանքից հյուսիս ընկած դաշտային հատվածը[56], լիովին համապատասխանում է պատմական իրողությանը, այն դիտարկմամբ, որ նման վիճակը պայմանավորված է եղել Բաղասականի ուժեղ թագավորության գոյությամբ, որի քաղաքական վերելքի և վայրէջքի պայմաններում էլ հանդես են եկել նման քաղաքական, վարչական, աշխարհագրական ընկալումները: Հենց աշխարհագրական լայն ընդգրկմամբ՝ հին Աղվանքի արևելյան ամբողջ հատվա-

---

վային մյուս գավառների տեղորոշումն ըստ «Աշխարհացոյց»-ի.– ՀԱ, 2008, № 1–12, էջ 93–94, ծնթ. 4):

[54] *Տե՛ս* Ա. Ա. Ա կ օ պ յ ա ն. *Նշվ. աշխ., էջ 115–124:*

[55] *Քաղաց դաշտի տեղադրությունը տե՛ս* Ս. Ե ր է մ յ ա ն. *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 89,* Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. *Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Երևան, 2001:*

[56] Ա. Ա. Ա կ օ պ յ ա ն. *Նշվ. աշխ., էջ 102,* ն ո ւ յ ն ի՝ *«Վաչագանի վեպ»-ը և Արշակունյաց թագավորության խնդիրը Դ-Զ դարերի Աղվանքում.– ՀԱ, 2003, № 1–12, էջ 99:*

ծը, Բաղասականը՝ որպես առանձին շահր, սակայն Աղվանից մարզպանի ենթակայության տակ, հիշատակվում է Քուստի Կապկոհի վարչական շրջանների ցանկում[57]*: Այս տարածքով Բաղասականը նույնանում է Զաքարիա Հռետորի հիշատակած Բազգունին*[58]*, որն ընկած էր Կասպից ծովի ափին և հասնում էր մինչև Կասպից դռներ, որից այն կողմ բուլղարներն էին*[59]*: Կասպից դռները նույնանում են Դերբենդի լեռնանցքին, հետևաբար, Բաղասականի տարածքը VI դարում լիովին համապատասխանում էր «Աշխարհացոյց»-ի Քուստի Կապկոհ երկրամասի Բաղասական շահրին: Բաղասականին նեղ առումով համապատասխանում է նաև Անանուն Ռավեննացու հիշատակած* Caspiae-*ն*[60]*:* asageton-*ը Զողն է,* Lepon-*ը՝ Լփինքը, ուրեմն* Caspiae-*ն էլ աշխարհագրորեն համապատասխանում է Բաղասականին*[61]*: Բաղասականը հիշատակվում է նաև Շապուհ Ա-ի Նախշ-ի-Ռուստեմի արձանագրությունում*[62]*, որտեղ թվարկվում են հպատակ երկրները*[63]*: Այսպիսով, Բաղասականի*[64] *տեղադրությունը Աղվանքից արևելք, Կասպից ծովի ափին, արձանագրության տվյալներով ևս հաստատվում է, որից հյուսիս ընկած երկիրն էլ մինչև Կովկասյան լեռներ և Աղվանից դռներ, այսինքն՝ Դերբենդի լեռնանցք, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է Մասքթաց թագավորության հիմնական տարածքին՝ Զողին: Բաղասականը հիշատակվում է նաև Քարթիրի արձանագրությունում*[65]*.*

---

[57] *Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ…, էջ 40:*

[58] *Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Լփինքի տեղադրության հարցի շուրջ, էջ 115,* А. А. А к о п я н. Албания-Алуанк , *էջ 102: «Աշխարհացոյց»-ում հիշատակված Բազանք-Բաքանքի սրբագրումը Բազկան հիմնավորված չէ (տե՛ս Ս. Տ. Ե р е м я н. «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ.– ՊԲՀ, 1973, -2, էջ 273, Ա н а н и а Ш и р а к а ц и. Մատենագրություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Ս. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 288):*

[59] Н. В. П и г у л е в с к а я. Сирийский источник VI в. о народах Кавказа.– Вестник древней истории *(այսուհետև՝* ВДИ*), 1939, № 1, с. 144, Ն ո ւ յ ն ի՝* Сирийские источники по истории народов СССР. М.–Л., 1941, с. 165.

[60] *«…*item patria Albania, item patria Masageton, item patria Caspiae, item patria Lepon*…»* (A n o n y m i R a v e n n a t i s. Cosmographia, ed. M. Pinder et Parthey, Berolini, 1860, II, 12, p. 68.)

[61] *Հմմտ.* С. Т. Е р е м я н. Страна «Махелония» надписи Кааба-и-Зардушт.– ВДИ, 1967, № 4, с. 47.

[62] E. H o n i g m a n n et A. M a r i c q. Recherches sur les Res Gestae divi Saporis. Bruxelles, 1953, p. 11, 40.

[63] *«…* И я (Шапур I) владею [следующими] царствами: Парс, Партав, Сузиана, Месена, Асурестан, Адиабена, Аравия, Атурпатакан, Армения, Иберия, Махелония, Албания, Баласакан и - дальше, вплоть до гор Кап и Албанских ворот (*բնագրում* Ἀλανῶν– Հ. Խ.*)* и все горы Парешхвара,Мидия,Гурган…»
(В. Г. Л у к о н и н. Древний и раннесредневековый Иран. М., 1987, с. 138. V. G. L u k o n i n. Political, Social and Administrative Institutions: Taxes and Trade. – The Cambridge History of Iran, vol. 3 (2). London, 1983, p. 730; *հմմտ. նաև Ն ո ւ յ ն ի՝* Культура Сасанидского Ирана. М., 1969, с. 125; Р. Ф р а й. Наследие Ирана. М., 1972, с. 295; К. В. Т р е в е р. *Նշվ. աշխ., էջ* 135):

[64] *Արձանագրության հունարեն տարբերակում բացակայում է պարթևական տարբերակի bɨskn-ը:*

[65] *«…*страна Армения, и Иберия, и Албания, и Баласакан, вплоть до «Албанского прохода»-[там, где] Шапур, царь царей, с конями и людьми, сам…разрушения и пожарища и учинил» В. Г. Л у к о н и н. с. 220; V. G. L u k o n i n. *Նշվ. աշխ., էջ 731,*

*Բերված արձանագրություններում Բաղասականը, փաստորեն, Այսրկովկասի կարևորագույն երկրներից մեկն է, ընդ որում, կրկին ընդգծենք, որ ըստ արձանագրության ոչ թե Բաղասականն է տարածվել մինչև Աղվանից կամ Դերբենդի լեռնանցք, այլ այն երկիրը, որի անունը տվյալ հատվածում արձանագրված չէ: Խոսքը, անշուշտ, Մասքթաց թագավորության մասին է, որը հիշատակված է Պայկուլիի արձանագրությունում: Արձանագրության մեջ հիշատակված է մասքութների թագավորը, որից առաջ արձանագրության վնասված հատվածում վերականգնված է Բաղասականի անունը (տեքստում՝ Բաղասականի թագավորը), ինչը մազքթաց թագավորից հետո հիշատակված Վիրքի, Սիգանի (*Sigān)[66], *Հայաստանի (բնագրում՝ թագավոր Տիրիդատ) թագավորներից*[67] *հետո միանգամայն հնարավոր է և համապատասխանում է վերը բերված արձանագրությունների տեղեկությունների ընդհանուր տրամաբանությանը: Պայկուլիի արձանագրության մեջ կա մի հիշատակություն, որը օտար և աղրբեջանցի որոշ մասնագետների հիմք է տվել անարդարացիորեն նույնացնելու Բաղասականը Փայտակարանի հետ*[68]*: Ինչպես պարզվում է արձանագրությունից, Նարսեհի գահակալության արարողությունը շնորհավորողներից էր նաև Մուկանի տեր Փորասմանը*[69]*: Կարծում ենք, որ Մուկանի նույնացումը Փայտակարանին (փոխանակ Բելուջիստանին հարևան Մաքա-Մական երկրամասի), թերևս, հնարավոր չէ, քանի որ վերջինս գտնվում էր Մեծ Հայքի կազմի մեջ: Թեպետ միևնույն ժամանակահատվածում, գուցե, ռազմավարական նպատակներով տվյալ ժամանակ ուղղակիորեն ենթարկվում էր Սասանյան արքունի-*

ուսումնասիրողն անգլերեն տեքստում Բաղասականից առաջ հիշատակում է Machelonia-*ն: Տե՛ս նաև* M. L. C h a u m o n t. L'Inscription de Kartir à la ×Ka'bah de Zoroastre*ն.*– Journal Asiatique, t. 248. Paris, 1960, p. 348.

[66] *Ակադ. Ս. Տ. Երեմյանի կողմից* syk'n=siran=lyran (Lairan) *նույնացումը Վ. Գ. Լուկոնինը համարում է անհնարին (տե՛ս* В. Г. Л у к о н и н. *Նշվ. աշխ., էջ 264, ծնթ. 35): Ա. Մարիքը կարծում է, որ* Sigan-Μαχελοίա- *և գործածված է ընդհանրապես «Կողքիս» նշանակությամբ (տե՛ս* E. H o n i g m a n n et A. M a r i c q. *Նշվ. աշխ., էջ 63–80): Մեր կարծիքով,* Sigān-*ի անունը պահպանվել է «Աշխարհացույց»-ում Կողքիսի նկարագրության մեջ հանդիպող Զիգանեոն քաղաքի անվան մեջ (տե՛ս Ս. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 52, 103), որը Գեորգի Կիպրացու մոտ հանդես է գալիս որպես Լազիկայի թեմի չորս եպիսկոպոսություններից մեկը (տե՛ս* Georgii Cyprii Descriptio orbis Romani, ed. H. Gelzer. Leipzig, 1890, s. 24; С. Т. Е р е м я н. Торговые пути Закавказья в эпоху Сасанидов по Tabula Peutingeriana.— ВДИ, 1939, № 1, с. 94; Г. М е л и к и ш в и л и. К истории древней Грузии. Тбилиси, 1959, с. 389): *Այն Անանուն Ռավեննացու* Siganium-*ն է (տե՛ս* A n o n y m i R a v e n n a t i s. Cosmographia, p. *75), Պտղոմեոսի՝* Σιγάνεον-*ը (*Ptol. V, 9, 2*):*

[67] H. H u m b a c h, O. P. S k j æ r v ø. The Sassanian Inscription of Paikuli. Pt. 3. 1. Restored Text and Translation by O. P. Skjærvø. Wiesbaden, 1983. « 92. *Հմմտ.* В. Г. Л у к о н и н. *Նշվ. աշխ., էջ 169.*

[68] J. M a r q u a r t. *Նշվ. աշխ., էջ 119–120, Հ. Հ յ ո ւ բ շ մ ա ն. Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմ. Հ. Պիլէզիկճեան, Վիեննա, 1907, էջ 106, Ս տ. Կ ա ն ա յ ե ա ն ց. Անյայտ գաւառներ հին Հայաստանի, Վաղարշապատ, 1914, էջ 177-178,* К. В. Т р е в е р. *Նշվ. աշխ., էջ* 75, 196, E. H o n i g m a n n et A. M a r i c q. *Նշվ. աշխ., էջ 80-87: Ս. Ե ր ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 88, Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 249-251, տե՛ս* C h. B r u n n e r. Geographical and Administrative Divisions: Settlements and Economy.– The Cambridge History of Iran, vol. 3 (2). London, 1983, *էջ 748-ի քարտեզը, էջ 762 (Բաղասականը տեղադրված է Կուրի ստորին հոսանքի աջ և ձախ ափերին),* С. Ю. К а с у м о в а. Южный Азербайджан в III–VII вв. Баку, 1983, с. 27, 54.

[69] H. H u m b a c h, O. P. S k j æ r v ø. *Նշվ. աշխ.,* § 93, В. Г. Л у к о н и н. *Նշվ. աշխ., էջ 169:*

քին, ինչը հնարավոր էր մինչև Նարսեհի պարտությունը 297 թվականին[70]*: Արդեն Մծբինի 298 թվականի դաշնագրով Փայտակարանը Մեծ Հայքի թագավորության անբաժանելի մասն էր, և Խորենացու համաձայն, Տրդատ Գ-ի մոտ են գալիս «գործակալք կողմանցն արևելից հիւսիսոյ, վերակացուք հեռաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան…», որից երևում է, որ Փայտակարան քաղաքն ուղղակիորեն ենթարկվում էր թագավորին*[71]*: Մուկան երկրամասը հիշատակվում է նաև «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ. «Մարք, որ կոչին Քուստիկ Քապկողք, յելից կալով Հայոց և առ երի Կասբից ծովուն. և ունի աշխարհս զայսոսիկ. զԱտրպատական, զՌէ, զԳելան, զՄուկան, զԴիլումն, զԱհմադան, զԴամբվար, զՏապարաստան, զԱմաւդ, զՌուան…»*[72]*: Ի տարբերություն նույն աշխատության ընդարձակ խմբագրության, այստեղ չկան Հայաստանը, Վիրքը, Աղվանքը, Բալասականը, Սիսականը, Շանճանը և ավելացել են Մուկանն ու Ահմադանը, այն դեպքում, երբ Ահմադանը հիշատակվում է ընդարձակ խմբագրության Քուստ-ի-Խորասանի մեջ: Չխորանալով այս տարբերությունների քննության մեջ, որը դուրս է մեր ուսումնասիրությունից, նշենք, որ ենթադրաբար Հայաստանի, Վիրքի, Աղվանքի, Բալասականի, Սիսականի բացակայությունը նշանակում է, որ համառոտ խմբագրության մեջ արտացոլվել են ավելի վաղ ժամանակների վարչական որոշ իրողություններ, որոնք, թերևս, կապվում են մ. թ. III դարի հետ: Քուստ-ի-Կապկոհի կազմում Մուկանի հիշատակությունը, բնականաբար, այդ նահանգը կապում է Մարաստանի տարածքի հետ և այն կարող է նույնացվել Փայտակարանի հետ: Այսպիսի նույնացումը հնարավոր է Երանշահրում Սասանյան Նարսեհի գահակալության սկզբի հետ՝ նախքան Մծբինի դաշնագիրը, երբ Մեծ Հայքի ամբողջ տարածքի վրա Տրդատ Գ-ի իշխանությունը դեռևս լիակատար չէր և դեռևս գահին չամրապնդված Նարսեհի համար Փայտակարանը ռազմավարական նպատակներով որոշ ժամանակ ևս ենթարկվում էր արյաց արքային, սակայն այս իրավիճակը ոչ թե վարչական կացության արդյունք էր, այլ պայմանավորված էր քաղաքական հարաբերություններով: Մուկանի նույնացումը Փայտակարանին միանգամայն հնարավոր է, սակայն, կարծում ենք, որ «Աշխարհացոյց»-ի ընդօրինակողներից մեկը Մուկանը, ավելի ուշ նույնացնելով հետագա դարերում հայտնի Մուղանին (իմա՛ Փայտակարան), տեղադրել է Կապկոհի մեջ, հատկապես եթե նկատի ունենանք, որ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ և համառոտ*

---

[70] *293 թվականին Նարսեհը Տրդատին ճանաչում է պարսկական Հայաստանի թագավոր (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 64-65,* B. M a c D e r m o t. The Conversion of Armenia in 294 A. D.– Revue des Études Arméniennes, t. VII. Paris, 1970, p. 284–285; *Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Ե՞րբ է քրիստոնեությունը Հայաստանում հռչակվել պետական կրոն.– ՀԱ, 2006, № 1–12, էջ 171–172), իսկ Տրդատն էլ երախտագիտությամբ լցված Նարսեհին կոչում է «աստված արքայից արքա» (տե՛ս* J. M a r k w a r t. Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen. Wien, 1930, S. 124, 134–135 *և այլն):*

[71] *Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 259:*

[72] К. П. П а т к а н о в. Армянская География…, с. *59–61. Հավելված՝ «Աշխարհացոյց է դարու», էջ 22: Ա ն ա ն ի ա Շ ի ր ա կ ա ց ի, էջ 348, 352, Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի. Աշխարհացոյց.– Մատենագիրք Հայոց, հ. Բ, էջ 2173, 2174, 2190:*

խմբագրություններում[73] *Փայտակարանը մտնում էր Ատրպատականի մեջ: Թովմա Արծրունին Մուկանը տեղադրում էր Կրմանի և Թուրքաստանի միջև, իսկ նրա հիշատակած Մականը, որը Մուղանն է, կապված էր Փայտակարանի կողմերի հետ*[74]*: Չի բացառվում նաև, որ 428 թվականին հայկական թագավորության վերացումից հետո ռազմավարական նույն նպատակներով Փայտակարանը (Մուկան անունով) ինչ-որ ժամանակ եղել է առանձին շահր Քուստ-ի-Կապկոհի կազմում, և հենց վարչական այդ կացությունն է արտացոլված «Աշխարհացույց»-ի համառոտ խմբագրությունում: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում VI դարի սասանյան կնիքներից մեկը, որը պատկանել է Բազահայի, Հայաստանի, Մուկան շահրի և Ատրպատականի քուստի համարկարին*[75]*: Բազահան նույնանում է Դաշտի Բազկանին, իսկ Մուկանը՝ Փայտակարանին, հետևաբար, Բաղասականը չի նույնանում Փայտակարանին:*

Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել սկզբնաղբյուրներում հիշատակվող այն տեղեկություններին, ըստ որոնց, Մուկան անունով երկրամասը տեղադրվում է Կուրից հյուսիս, հետևաբար, Պայկուլիի արձանագրության Մուկանը հնարավոր է տեղադրել նաև Կուրից հյուսիս: Այս Մուկանը մ. թ. III դարում մտել է Երանշահրի կազմի մեջ, ինչի մասին վկայում է Իբն Խորդադբեհի այն տեղեկությունը, որ Արտաշիրը շահ տիտղոսով մեծարում է ի շարս այլ թագավորների նաև ալ-Լան շահին (որը Մուկանն է), Բաղասական շահին[76]*: Ալանաց երկիրը արաբերեն սովորաբար հիշատակվում է ալ-Լան ձևով, հետևաբար, այս Մուկանը տեղադրվում է աշխարհագրական բոլորովին այլ միջավայրում: Իբն Խորդադբեհի հիշատակությունը վերաբերում է ինչպես Սասանյան հարստության հիմնադիր Արտաշիրին, այնպես էլ Սասանյանների ողջ պատմության ժամանակաշրջանին, և նշված ցանկում կան երկրներ, որոնք չեն ունեցել թագավորական իշխանություն, օրինակ՝ Սիսաջան-Սիսականը*[77]*: Մեզ համար կարևորը տվյալ հիշատակության մեջ այն է, որ Մուկանը համարվել է Երանշահրի երկրամասերից մեկը, իրողություն, որը փաստ է 428 թվականից հետո և ենթադրություն, որն էլ հավանական է մ. թ. III դարում: Արաբ պատմիչ Մասուդին էլ շատ հստակ նշում է, որ Մուկանիա թագավորությունը տարբեր է Խազարական ծովի (իմա՛ Կասպից ծով) ափին գտնվող համանուն տիրույթից և գտնվում է Կաբալայի թագավորության հարևանությամբ*[78]*, այսինքն՝ Կուրից հյուսիս: Այս դեպքում Մուկանիան նույնանում է,*

---

[73] *Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ…, էջ 33,* К. П. Патканов. Армянская География..., *Հավելված «Աշխարհացույց է դարու», էջ 19:*

[74] *Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն. Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Մ. Վարդանյան, Երևան, 1978, էջ 398: Արծրունյաց տան պատմիչը՝ խոսելով Աժդահակի և Տիգրանի պատերազմի մասին, գրում է, որ հայոց թագավորը «եւ վազս առեալ փութացան մտին ընդ կողմն Մականայ, բանակեցան ի դաշտավայրին Մեդիացւոց» (նույն տեղում, էջ 62):*

[75] Э. Х у р ш у д я н. *Նշվ. աշխ., էջ 228:*

[76] *Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, թարգմ. բնագրից, ներածությունը Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 437:*

[77] *Ն. Ադոնցը Սիջիստանը կարդում է Սիսաջան (տե՛ս Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 248):*

[78] В. Ф. М и н о р с к и й. История Ширвана и Дербенда X–XI веков. М., 1963, с. 191, 211.

թերևս, վրացական աղբյուրների Մովականին[79] *և Կոստանդին Ծիրանածինի Մոկանին*[80]*:*

Մեզ մնում է քննարկել արաբական աղբյուրների տեղեկությունները Բաղասականի մասին: Այսպես Բալազուրին գրում է. «Երբ Օսման [խալիֆան] Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլիին հրամայեց գնալ Առան, սա գրավեց Բայլական քաղաքը հաշտության պայմանագրով, երաշխավորելով նրանց (բնակիչների) արյունը (կյանքը), ունեցվածքը, քաղաքի պարիսպները և պայման դրեց վճարել ջիզիա ու խարաջ: Ապա Սալմանը եկավ Պարտավ, բանակ դրեց Տրտուի (Սարսուր) ափին, որը մի գետ է նրանից մեկ փարսախից պակաս հեռավորության վրա (այնուհետև պատմվում է, որ որոշ ժամանակ անց Պարտավը հանձնվում է Բայլականի հաշտության պայմաններով – Հ. Խ.): Նա (Սալմանը – Հ. Խ.) հեծյալներ ուղարկելով նվաճեց Շակաշեն (Շակաշին), Մեծ Կուենք (Միսկուան), Ուտի (Ուզ), Մեծ Իրանք (Միսրիան), Հարճլանք (Հարջալիան) և Տրի (Տիար) գավառները (ռասատիկ), ապա նվաճեց Առանի այլ մասերը: Կոչ արեց Բաղասականի (Բալասաջան) քրդերին ընդունել մահմեդականությունը, իսկ նրանք կռվի դուրս եկան, և նա հաղթեց նրանց, ոմանց պարտավորեցնելով ջիզիա վճարել, իսկ այլոց, որոնք փոքրաթիվ էին՝ սադակա: Ինձ (հեղինակին – Հ. Խ.) պատմել են Պարտավի մի խումբ բնակիչներ, թե Շամքորը (Շամքու) հին քաղաք է: Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլին զորք ուղարկեց ու գրավեց այն… Սալմանն առաջ խաղաց դեպի Արաքսի և Կուրի միախառնման վայրը՝ Բարդիջի ետևում, անցավ Կուրը, նվաճեց Կապաղակը (Կաբալա), իսկ Շաքեի ու Կամբեճանի տերը նրա հետ հաշտություն կնքեց, հարկ վճարելու պայմանով»[81]*: Բերված տեղեկության մեջ կան հետաքրքիր մանրամասներ: Ինչպես կարելի է տեսնել, Սալմանը Բայլականը (այժմ Օրեն-կալա կոչվող ավերակների տեղում*[82]*) գրավում է Երասխն անցնելուց հետո, ընդ որում անցնելով Երասխը՝ արաբ զորավարը մտնում է Առան, ուրեմն արդեն Երասխից հարավ Բաղասական չկա: Այնուհետև Պարտավը գրավելուց հետո Սալմանի զորագնդերը նվաճում են հյուսիսից հարավ՝ Շակաշեն, Մեծ Կուենք, Ուտի (իմա՛ Ուտի Առանձնակ), Մեծ Իրանք, Հարճլանք, Տրի հայկական գավառները (Արցախի և*

---

[79] *«Իսկ Մովականին տվեց (Թարգամոս-Թորգոմը – Հ. Խ.) Մտկվարիից (Կուրից – Հ. Խ.) հյուսիս, Փոքր Ալազանի (Իորի գետը – Հ. Խ.) գետաբերանից մինչև ծովը» (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 112): Մովականը բազմիցս հիշատակում է նաև Վախուշտի Բագրատիոնին (տե՛ս Լ. Մ. Մ ե լ ի ք ս ե թ - Բ ե կ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ (ԺԸ–ԺԹ դդ.), Երևան, 1955, էջ 35, 51–52, 54, 62, 78):*

[80] Constantini Porphyrogeniti Imperatoris de Cerimoniis aulae Byzantinae. Bonnae, 1829, p. 688. *Տ ե՛ս նաև Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 152: Մոկանի նույնացումը Արցախի Մուխանք գավառին անհավանական է (նույն տեղում, էջ 313, ծնթ. 104), քանի որ նշված երկրները գտնվել են Կուրից հյուսիս:*

[81] *Արաբական աղբյուրներ, Գ, էջ 273–274: Այս տեղեկությունը կրկնում են նաև Իբն Ալ-Ֆակիհը (նույն տեղում, էջ 499) և Իբն Ալ-Ասիրը (տե՛ս Արաբական աղբյուրներ, Բ, Իբն Ալ-Ասիր, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 56):*

[82] *Փայտակարան-Բայլական-Օրեն-կալա հարցի քննարկումը տե՛ս Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն - յ ա ն. Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը, էջ 61–76:*

Ուտիքի մնացած գավառները ավելի վաղ գրավել էր Հաբիբը[83]) և, եթե սրանց ավելացնենք նաև Երասխի և Կուրի միախառնման մոտ ընկած Բարդիջը, որը տեղադրվում է Ռոտ-Պացեան գավառում, ապա կտեսնենք, որ Երասխի և Կուրի միջագետքում Բաղասական փնտրելը պարզապես անիմաստ է: Պարտավում գտնված ժամանակ Սալմանը կոչ է անում Բաղասականի քրդերին մահմեդականություն ընդունել, սակայն սրանք ընդդիմանում են և մարտից հետո միայն հնազանդվում: Մտածել, թե քրդերը նախահարձակ լինելով շարժվել են Պարտավում գտնվող Սալմանի վրա, կասկածելի է: Միաժամանակ բացառվում է նաև անմիջականորեն Սալմանի կողմից քրդերի հնազանդեցումը, թեև պատմիչը գրում է, որ արաբ զորավարը հաղթեց նրանց, այսինքն՝ հաղթանակը վերագրում է զորավարին: Եթե նույնիսկ անձամբ Սալմանն է հաղթել նրանց, ապա միայն Կուրի ձախափնյակում, քանի որ Կուրի և Երասխի միջագետքում՝ հիշյալ գավառների տեղադրության պայմաններում, Բաղասականի տեղադրության համար ազատ տարածություն չկա: Այստեղ առավել հավանական է, որ քրդերին հաղթել է ոչ թե անձամբ Սալմանը, այլ նրա զորագնդերից մեկը, ինչպես էր Շամքորի դեպքում: Բալազուրիի տեղեկությունից երևում է, որ Սալմանը գործել է Պարտավից՝ առանց ուղղակի մասնակցելու հիշյալ գավառների նվաճմանը և միայն Արցախն ու Ուտիքը նվաճելուց հետո արաբ զորապետն անձամբ իր բանակով անցնում է Կուրը Բարդիջի մոտ՝ շարժվելով դեպի Կապաղակ, Շաքե, ըստ էության, անցնելով արդեն նվաճված Բաղասականի տարածքով: Բաղասականի մասին հիշատակությունից կարող ենք եզրակացնել, որ բացառվում է Երասխից հարավ Բաղասականի տեղադրությունը, քանի որ այն գտնվել է Պարտավին մոտ, Կուրի ձախափնյակում և լիովին համապատասխանում է Դաշտի Բաղասականին: Հետաքրքիր է, որ Կուրն անցնելուց հետո Սալմանը միանգամից գրավում է Կապաղակն ու Շաքե-Կամբեճանի միացյալ իշխանությունը: Սա նշանակում է, որ Կուրից հյուսիս ընկած երկիրը՝ Բաղասականը, արդեն նվաճված էր և ըստ այդմ էլ Բալազուրին այլևս չի հիշատակում Բաղասականը:

Հաջորդ տեղեկությամբ, սակայն, Բաղասականը տեղադրվում է Երասխի աջափնյակում: Ըստ Իբն Խորդադբեհի (820-912 թթ.)՝ ճանապարհը Բարզանդից Բաղասականի և Վարդանակերտի դաշտ, որն Ատրպատականի վերջին շրջանն է, տասներկու փարսախ է[84]: Յակուտ ալ-Համավին (1178–1229 թթ.) էլ գրում է, որ Ար-Ռասը (Երասխը) ոռոգում է Բալասաջանի (Բաղասական) դաշտային շրջանը, որը ձգվում է գետի ափի վրա՝ սկսվելով Բարզանդից դեպի Բարզա երկարող գծից մինչև ծով և ընդգրկում է Վարդանն ու Բայլականը[85]: Եթե առաջին տեղեկության մեջ Բաղասականն ընկած է Բարզանդի և Վարդանակերտի միջև, ապա երկրորդի մեջ Բաղասական դաշտ է համարված ոչ միայն Վարդանակերտի շրջանը, սրանից հարավ ու արևելք ընկած տարածքը՝ Բարզանդի շրջանով ու վերջինիցս արևելք՝ Ռոտ-ի-Բաղա գավառով, դեպի

---

[83] *Արաբական աղբյուրներ, Գ, էջ 273:*

[84] *Նույն տեղում, էջ 447:*

[85] *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 70:*

Կասպից ծով, այլն Երասխից, Վարդանակերտից հյուսիս ընկած Բայլականի շրջանը, որը չի նույնանում Փայտակարան քաղաքին[86]*: Փաստորեն, Բաղասականը երկու տեղեկությունների դեպքում էլ կապված է միայն Երասխի հետ, երբ համաձայն նախորդ բոլոր սկզբնաղբյուրների տեղեկությունների՝ Բաղասականը տեղադրվում էր Կուրից հյուսիս: Իբն Խորդադբեհի տեղեկության մեջ այնքան էլ պարզ չէ՝ խոսքը Բաղասականի թե՞ Վարդանակերտի դաշտի մասին է կամ էլ նույն դաշտը երկուսին է վերագրում: Թերևս՝ Բաղասականը բնակավայր է և, ինչպես արդեն նշել է Ա. Հակոբյանը*[87]*, այլ հեղինակների մոտ՝ Իսթախրի, Իբն Հաուկալ, Մուկադդասի, Բաղասականի փոխարեն հիշատակվում է Բալխաբ բնակավայրը, ընդ որում Վարդանակերտից մինչև Բալխաբ յոթ փարսախ է, իսկ Բալխաբից էլ Բարզանդ՝ յոթ փարսախ*[88]*, այսինքն՝ Վարդանակերտից մինչև Բարզանդ տասնչորս փարսախ է, գրեթե նույնքան, ինչքան Իբն Խորդադբեհի մոտ է՝ տասներկու: Այս դեպքում, կարծում ենք, որ Բաղասականի հիշատակությունը Բարզանդի և Վարդանակերտի*[89] *միջև կասկածելի է, քանի որ Բալխաբի պարագայում գործ ունենք ստույգ տեղավայրի հետ, ինչը չի կարելի ասել Բաղասականի պարագայում: Նշենք նաև, որ Բարզան էլ տեղադրվում է ոչ թե Երասխից, այլ Ուրմիո լճից հարավ, Շիզից հարավարևմուտք*[90]*, հետևաբար, տեղեկության մեջ արդեն կա հակասություն: Բաղասականի դաշտի հիշատակությունն ինքնին ցույց է տալիս (եթե ընդունենք Բաղասականի դաշտը Արաքսի հարավային ափին), որ Վարդանակերտը գտնվում էր նշված դաշտում, ուստի, Բաղասականի դաշտը գտնվել է Վարդանակերտից և Բարզանդից հյուսիս-արևելք, այսինքն՝ կարող էր վերաբերել նաև Կուրի ձախափնյակին*[91]*: Ճիշտ է, կարող ենք ենթադրել, որ Բաղասական դաշտի անվան տարածումը Կուրի ձախափնյակից դեպի հարավ արաբական ժամանակաշրջանում հնարավոր էր ոչ միայն էթնիկական տեղաշարժման արդյունքում՝ խազարների ճնշման ներքո*[92]*, այլ նաև արաբ որոշ աշխարհագետնե-*

---

[86] *Տե՛ս* Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. *Փայտակարան քաղաքը…, էջ 61-76: Ըստ ուսումնասիրողի՝ Փայտակարան քաղաքը գտնվել է ներկայիս Սալյանի քաղաքից արևմուտք:*

[87] А. А. А к о п я н. *Նշվ. աշխ., էջ 103.*

[88] *Արաբական աղբյուրներ, Գ, էջ 577, 637, 658:*

[89] *Վարդանակերտը գտնվում էր ներկայիս Ալտան կոչվող վայրում, Բարզանդը՝ Արդաբիլից հյուսիս (տե՛ս* H u d ū d a l - ‘A l a m. The Regions of the World. A Persian Geography 372 A. H.–982 A. D., translated and explained by V. Minorsky, with the preface by V. V. Barthold. London, 1982, p. 142, 395):

[90] C h. B r u n n e r. *Նշվ. աշխ., էջ 748-ի քարտեզը, 762 (հմմտ. Իբն Խորդադբեհ.– Արաբական աղբյուրներ, Գ, էջ 447): Բարզան հիշատակում է Թեոփանեսը Հերակլի պարսկական արշավանքի ժամանակ (տե՛ս* Я. М а н а н д я н. Маршруты персидских походов императора Ираклия.– Труды, т. V. Ереван, 1984, с. 404*):*

[91] Б. А. А р у т ю н я н. Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ, с. *32.*

[92] *Պատմագիտության մեջ կարծիք կա, թե Բալահովիտ, Պաղնատուն, Բաղք, Բաղաց աշխարհ, Բաղասական և նման անունների մեջ պահպանվել է «բաղ» ցեղի անունը, որը սեմիտական աշխարհից շարժվեց դեպի հյուսիս (տե՛ս* Г р. К а п а н ц я н. Историко-лингвистическое значение топонимики древней Армении.– *Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ, հ. XIV, Երևան, 1940, էջ* 374, 380-381, *Բ. Ո ւ լ ո ւ բ ա բ յ ա ն. Պատմաաշխարհագրական ճշգրտումներ, էջ 180): Մեր կարծիքով, նշված անունների մեջ Բաղասականի*

րի պատկերացումներում, այն դեպքում, երբ արաբ հեղինակներից ոմանք էլ Բաղասականը տեղադրում են Կուրի ձախափնյակում: Սակայն մեզ համար ավելի հիմնավոր է ենթադրել, որ Բաղասական անունը արաբ հեղինակները շփոթել են Փայտակարանի Ռոտ-ի-Բաղա կամ Քաղան-ռոտ (տարբերակ՝ Բաղանռոտ) գավառների[93] հետ, որոնց անունների համահնչությունը Բաղասականին (Երասխի ձախափնյակի համար էլ Բայլականը) պատճառ է դարձել, որպեսզի Բաղասական անունը, հյուսիսից հարավ տեղափոխելով, տարածվեր Երասխի աջ ափի վրա, ընդ որում Կուրի ստորին հոսանքի աջափնյակի ոլորանը, ըստ այդ նույն հեղինակների, չէր մտնում Բաղասականի դաշտի մեջ: Ի տարբերություն Իբն Խորդադբեհի և Յակուտ ալ-Համավիի, X դարի արաբ հեղինակ Իսթախրին գրում է, որ Արաքսը «բխում է Հայաստանից, հասնում Վարդանակերտի դուռը, ապա Մուղանի ետևի կողմով և Կուրի ելքի ետևով թափվում ծովը»[94]: Նույն ժամանակաշրջանի արաբ մեկ այլ հեղինակ Մուկադդասին էլ գրում է, որ Արաքս-Երասխը «ձգվում է Առանի սահմանների երկայնքով, բխելով Հայաստանից ու վերջապես հասնում է Վարդանակերտ, ապա ուղղվում Մուղանի ետևի կողմը և թափվում [Կասպից] ծովը»[95]: Նշված հեղինակների կամ նրանց օգտագործած աղբյուրի համար Երասխը Մուղանից և Կուրի գետաբերանից հարավ առանձին հունով է թափվել Կասպից ծովը, այն դեպքում, երբ, օրինակ, Իբն Խորդադբեհի, Իբն ալ-Ֆակիհի, Իբն Ռուստայի մոտ Երասխը և Կուրը միասին են թափվել ծովը[96]: Բերված տեղեկությունների մեջ կարևոր է այն ցուցումը, որ Երասխի և Կուրի միջև գտնված Մուղանը կամ Մովականը[97] աշխարհագրական առումով չի տարածվել Երասխից հարավ, երբ Բաղասականի անունը Կուրից հարավ տարածվելու դեպքում պետք է նախ ընդգրկեր Մովականի դաշտը, հետո էլ Երասխի ստորին հոսանքի աջափնյակը, սակայն, տեսնում ենք, որ Բաղասականի դաշտը հայտնվել է Երասխի ափին՝ ընդգրկելով Բայլականը, Վարդանակերտը, Բարգանդը և սրանից արևելք ընկած հողերը մինչև Կասպից ծով, ինչը պայմանավորված էր արաբ աշխարհագետների պատմաաշխարհագրական գիտելիքների խառնաշփոթ

կապը բաղերի հետ առավել կասկածելի է (հակառակ պարագայում բաղ ցեղանվան արտացոլումը կարելի է տեսնել նաև Փայտակարանի Բաղանռոտ գավառանվան մեջ), քանի որ այն կապված է լեռնական բաղասճիք ցեղի հետ (հմմտ. Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 471), որը, թերևս, այլ ծագում ունի բաղերից:

[93] *Մովսէս Խորենացի. Աշխարհացոյց.– Մատենագիրք Հայոց, հ. Բ, էջ 2153, 2172, 2188: Տեղադրությունը տե՛ս Բ. Հարությունյան. Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:*

[94] *Արաբական աղբյուրներ, Գ, էջ 575:*

[95] *Նույն տեղում, էջ 656:*

[96] *Նույն տեղում, էջ 454, 501, 512:*

[97] *Մովականի տեղադրությունը տե՛ս Բ. Հարությունյան. Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ: Մուղանի նույնացումը Արցախի Մուղան-Մուխանք գավառին անհավանական է (տե՛ս, օրինակ, Արաբական աղբյուրներ, Գ, էջ 326, ծնթ. 225): Իբն Հաուկալի մոտ կարդում ենք. «Բաց տեղում, Արաքս գետի վերևում (քարտեզի – Հ. Խ.) գրված է Ատրպատական, իսկ ցամաքից մի մասի վրա, որը մտնում է ծովի մեջ, այս գրության վերջում կա՝ Մուղան» (տե՛ս Արաբական աղբյուրներ, Գ, էջ 623): Այստեղ հիշատակված Մուղանի նույնացումը Արցախի Մուխանքին բացառվում է:*

նույնացումներով: Հետևաբար, արաբ հեղինակների տեղեկությունները բավարար հիմք չեն Բաղասականը Փայտակարանում տեղադրելու կամ նրա հետ նույնացնելու համար:

Այսպիսով՝ ելնելով վերը կատարված քննության արդյունքներից, կարող ենք եզրակացնել, որ Բաղասական երկիրը, դաշտը, բաղասիճները գտնվել են Կուրի ստորին հոսանքի ձախափնյակում: Ընդ որում՝ Բաղասական երկրի անվան տակ լայն առումով երբեմն հասկացվել է հին Աղվանքի արևելյան, ծովափնյա կեսը: Վարչական առումով լինելով առանձին շահր Քուստ-ի-Կապկոհի երկրամասում՝ Բաղասականը մտնում էր Աղվանից մարզպանության կազմի մեջ և կարևոր դեր ուներ Այսրկովկասի քաղաքական անցուդարձերում:

ТЕРРИТОРИЯ СТРАНЫ БАЛАСАКАН

ОГАННЕС ХОРИКЯН

Р е з ю м е

К вопросу о расположении Баласакана по разным поводам обращались Гр. Ачарян, М. Абегян, Е. Тер-Минасян, Г. Алишан, Н. Адонц, С. Еремян, Б. Улубабян, Б. Арутюнян, А. Акопян и др. Эти авторы пытались локализовать Баласакан на Северном Кавказе, в районах, соседствующих с гуннами, в междуречьи Алазани и Куры, в Пайтакаране или Каспке и на левобережьи Куры. Разностороннее изучение первоисточников показывает, что страна Баласакан, Баласаканское поле, Баласичи находилась на левом берегу нижнего течения Куры, причем в широком смысле Баласакан охватывает всю восточную, приморскую половину древней Албании. Баласакан как отдельный шахр входил в кустак Капкох, но оставался в подчинении албанского марзпана и имел важное политическое значение в регионе.

THE TERRITORY OF THE LAND OF BALASSAKAN

HOVHANNES KHORIKYAN

S u m m a r y

Hr. Acharyan, M. Abeghyan, Ye. Ter-Minassyan, Gh. Alishan, N. Adonts, S. Yeremyan, B. Ulubabyan, B. Harutyunyan, A. Hakobyan and others have studied the problem of the localization of Balassakan, which was located in the Northern Caucasus, in the regions near the Huns, between the rivers Alazani and Kur, in P’aytakaran or Kaspk’ and on the left bank of the Kur. The comprehensive investigation of the sources shows that the land of Balassakan, the Balassakan field and Balasiçk‘ were situated on the left bank of the lower stream of the Kur, moreover, the name of Balassakan was widely used for the east seaside part of ancient Albania. From the administrative point of view Balassakan was an individual shahr in Kusti-kapkoh and entered into the structure of the Albanian marzpanate and had an important role in the political life of Transcaucasia.